# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-21/4

ք. Երևան «18» հոկտեմբերի 2021թ.

Վարչապետի աշխատակազմը, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը, ի դեմս տնօրեն Մուրադ Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 18.08.2021թ-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 14 775 000 (տասնչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում;

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

-----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Հարմոնիա»
տեղեկատվական տեխնոլոգիաների և
կրթության զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Սևաստոպոլյան 45
«Ինեկոբանկ» ՓԲԸ 2050022433141001
ՀՎՀՀ 00090751

------------------------- Մ. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«18» 10 2021 թ. կնքված
ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 72261180/3 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ ի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ /Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի սպասարկում/ համաձայն հավելված 1.1-ի | դրամ | 14 775 000 | 1 | Ք.Երևան, Տերյան 89 | 2021թ. օգոստոսի 18-ից-դեկտեմբեր |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հարմոնիա»
տեղեկատվական տեխնոլոգիաների և
կրթության զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Սևաստոպոլյան 45
«Ինեկոբանկ» ՓԲԸ 2050022433141001
ՀՎՀՀ 00090751

Մ. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«18» 10 2021թ. կնքված
ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ /Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի ՏՏ սպասարկում/

Համակարգի նկարագրություն

Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը (այսուհետ՝ ՔԾՏՀ կամ Համակարգ) բարդ, բազմաֆունկցիոնալ, բազմաշահառու առցանց ավտոմատացված տեղեկատվական համակարգ է, որը ներդրված է քաղաքացիական ծառայության համակարգում ընդգրկված հանրային իշխանության մարմիններում (այսուհետ՝ մարմիններ) և բաղկացած է 14 (ենթա)համակարգերից և արտաքին կայքէջից, որոնք որպես մեկ միասնական տեղեկատվական համակարգ ապահովում են համապատասխան մարմիններում անձնակազմի ներգրավման, անձնակազմի կառավարման, ռազմավարական պլանավորման, մասնագիտական զարգացման մի շարք գործընթացների ավտոմատացումը:

ՔԾՏՀ-ը շահագործվում է գլխավոր ադմինիստրատորի (Քաղաքացիական ծառայության գրասենյակ), քաղաքացիական ծառայության համակարգում ընդգրկված մարմնի, թեստավորում անցկացնող անձի, համակարգում գրանցված ֆիզիկական անձի և քաղաքացիական ծառայողի միջավայրերում:

Ստորև ներկայացվում է ՔԾՏՀ-ի ենթահամակարգերի հակիրճ նկարագրությունը.

| # | (Ենթա)համակարգ | Նկարագրություն |
|---|---|---|
| 1 | Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկ և պաշտոնների անձնագրեր | ՔԾ պաշտոնների անվանացանկի ստեղծման, վարման, անվանացանկում ժամանակագրական փոփոխությունների իրականացման, պաշտոնների անձնագրերի ստեղծման, վարման, փոփոխման օրենքով և կարգով սահմանված գործընթացների ավտոմատացում |
| 2 | Մարմնի կառուցվածք | Մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների մուտքագրում՝ ենթակայության սկզբունքով, կառուցվածքի վարում, փոփոխությունների նախագծում, հաշվառում |
| 3 | Մրցույթներ՝ ներքին և արտաքին մրցույթներ | Ներքին և արտաքին մրցույթների հայտարարման, հայտերի ստացման, գնահատման, հարցազրույցների անցկացման, արդյունքների ամփոփման և հրապարակման, պաշտոնի նշանակման օրենքով և կարգով սահմանված գործընթացների ավտոմատացում |
| 4 | Վարկանիշային մրցույթ | Վարկանիշային թեստավորման հայտարարման, հայտերի ստացման, գնահատման, հարցազրույցների անցկացման, արդյունքների ամփոփման և հրապարակման օրենքով և կարգով սահմանված գործընթացների ավտոմատացում |
| 5 | Վարկանիշային ցուցակ | Վարկանիշային ցուցակի ձևավորման, վարման, կառավարման, պաշտոնի նշանակման օրենքով և կարգով սահմանված գործընթացների ավտոմատացում |
| 6 | Թեստավորում | Թեստային առաջադրանքների շտեմարանների ստեղծման, թեստային հարցաշարերի ձևավորման, թեստերի ավտոմատ գեներացման, արդյունքների գնահատման, բողոքարկման, ամփոփման, հրապարակման օրենքով և կարգով սահմանված գործընթացների ավտոմատացում |
| 7 | Վերապատրաստումներ | Մասնագիտական կարիքների գնահատման, դասընթացների ծրագրերի ստեղծման, դասընթացների ժամանակացույցի ստեղծման, մասնակիցների գրանցման/ կցագրման, քաղաքացիական ծառայողի տարեկան անհատական և տվյալ մարմնի վերապատրաստման տարեկան ծրագրի ձևավորման, կառավարման, հաստատման, վերապատրաստման արդյունքների ամփոփման, կրեդիտների հաշվարկման, հաշվետվությունների ձևավորման օրենքով և կարգով սահմանված գործընթացների ավտոմատացում, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների հեռավար վերապատրաստման հարթակի (moodle համակարգի) միջոցով իրականացված վերապատրաստումների արդյունքների և տվյալների մուտքագրում ՔԾՏՀ-ում: |

| | | |
|---|---|---|
| 8 | Քաղաքացիական ծառայողի անձնական գործ | Անձնակազմի կառավարման ստորաբաժանումների կողմից պետական ծառայողների անձնական գործերի էլեկտրոնային ձևավորման/վարման, փորձաշրջանի վարման, տեղափոխման, փոխադրման, գործուղման, խրախուսման, կարգապահական տույժի կիրառման, աշխատավարձի հաշվարկման, համապատասխան մարմնում պաշտոնի նշանակվելիս համակարգում անձնական գործ ունեցող աշխատողի անձնական գործի վերականգնման և վարման օրենքով և կարգով սահմանված գործառույթների ավտոմատացում |
| 9 | Ռեզերվ | Ռեզերվի ձևավորման, վարման, կառավարման, վերահսկողության գործընթացների ավտոմատացում |
| 10 | Փորձնակ | Փորձնակների ներգրավման, տվյալների կառավարման, մարմիններին կցագրման, գնահատման, վերահսկողության իրականացման գործընթացների ավտոմատացում |
| 11 | Փորձագետ | Փորձագետների ներգրավման, տվյալների կառավարման, վերահսկողության իրականացման գործընթացների ավտոմատացում |
| 12 | Ծառայողական քննություն | Օրենքով սահմանված կարգով վարվող ծառայողական քննության ամբողջ գործընթացի ավտոմատացում |
| 13 | Օգտվողների կառավարում | Համակարգի տարբեր միջավայրերի օգտվողների իրավունքների և լիազորությունների կառավարում |
| 14 | Հաշվետվություններ, գրանցամատյաններ և վիճակագրական տվյալներ | Համակարգի տարբեր միջավայրերի օգտվողների, ինչպես նաև արտաքին կայքէջի տիրույթներում թվայնացված բոլոր տեղեկությունների և ժամկետային պարամետրերի համակցմամբ համակարգված որոնողական համակարգերի միջոցով վիճակագրական տվյալների ինքնաշխատ ստացում, հրապարակում, գրանցամատյանների ստեղծում և վարում,դրանց հիման վրա հաշվետվությունների գեներացում, արտահանում, այդ թվում՝ էլեկտրոնային և թղթային եղանակներով |
| 15 | Արտաքին կայքէջ | Կայքը ապահովում է օրենքով սահմանված բոլոր տեղեկությունների, ցանկերի, հայտարարությունների ավտոմատ հրապարակում, համակարգում ֆիզիկական անձանց գրանցում, մրցույթներին մասնակցության հայտերի ներկայացում |

ՔԾՏՀ-ն ինտեգրված է պետական կառավարման ոլորտում ներդրված, գործող այլ էլեկտրոնային կառավարման համակարգերի, մասնավորապես՝ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի, Mulberry փաստաթղթաշարժի էլեկտրոնային համակարգի, ԷԿԵՆԳ-ի էլեկտրոնային ստորագրությունների համակարգերի հետ, ինչպես նաև ունի առնվազն սույն մրցույթի հրապարակման պահին Հայաստանի Հանրապետությունում ներդրված և գործող այլ էլեկտրոնային կառավարման համակարգերին և տեղեկատվական շտեմարաններին Կառավարության սահմանած կարգով փոխգործելիության շրջանակներում ինտեգրվելու ծրագրատեխնիկական հնարավորություն:

**ՔԾՏ Համակարգի սպասարկման ծառայությունները և ներկայացվող պահանջները՝**

1. ՔԾՏՀ-ն շահագործող հանրային իշխանության մարմինների աշխատակիցներին տեխնիկական աջակցության և ՏՏ խորհրդատվության տրամադրում աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն: Համակարգի բոլոր տիրույթների օգտվողների համար պետք է գործի «Թեժ գիծ» ծառայությունը, որը պետք է հասանելի լինի բազմագիծ (առնվազն երկու միաժամանակյա զանգ սպասարկելու հնարավորությամբ) հեռախոսակապի միջոցով 5/8 ռեժիմով:
2. ՔԾՏՀ-ի «Թեժ գիծ» ծառայության միջոցով ստացվող բոլոր հայտերը պետք է գրանցվեն Կատարողի սպասարկման գործընթացի համակարգման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգում (e-ticketing), որին մուտքի հնարավորություն պետք է ունենա նաև Պատվիրատուն: Պատվիրատուին պետք է տեսանելի լինեն գրանցված բոլոր հայտերը իրենց կարգավիճակներով:
3. ՔԾՏՀ-ի ներդրման ընթացքում, ինչպես նաև սպասարկման ծառայությունների ժամանակահատվածում հայտնաբերված համակարգային սխալների, թերությունների (error, bug) շտկում, վերացում:

4. ՔՕՏՀ-ում հայտնաբերված սխալների վերացման համար անհրաժեշտ ծրագրային թարմացումների իրականացում, թեստավորում և տեղադրում սերվերային միջավայրում: Թարմացումները պետք է կատարվեն ոչ աշխատանքային ժամերի ընթացքում՝ այդ մասին Պատվիրատուին նախապես տեղեկացնելով: Առանձին անհետաձգելի դեպքերում թարմացումները կարող են իրականացվել նաև աշխատանքային ժամերին՝ Պատվիրատուի համաձայնությամբ:
5. Պատվիրատուի պահանջով ՔՕՀՏ-ի օգտվողների կառավարման ենթահամակարգում տարբեր գործողությունների իրականացման համար առանձին իրավունքների/լիազորությունների ավելացում, փոփոխում:
6. ՔՕՀՏ-ի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից:
7. Պատվիրատուի պահանջով ՔՕՏՀ-ի տեղափոխում նոր սերվերային միջավայր, սերվերների օպերացիոն համակարգերի տեղադրում:
8. ՔՕՏՀ սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացնելիս՝ ներդրված և շահագործվող ՔՕՏՀ-ի մաս կազմող բոլոր ենթահամակարգերի փոխգործակցության ապահովում:
9. ՔՕՏՀ-ի աշխատանքի անխափանության համար՝ ՔՕՏՀ-ի մաս կազմող որևէ (ենթա)համակարգում շտկումների և/կամ թարմացումների կատարման համաժամանակեցման և համաձայնեցման ապահովումը դրանից բխող ՔՕՏՀ այլ (ենթա)համակարգերում անհրաժեշտ փոփոխությունների հետ:
10. ՔՕՏՀ սպասարկման ծառայությունների մատուցումն իր մեջ ընդգրկում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» N 1093-Ն որոշմամբ (սույն կետում այսուհետ՝ Որոշում) համակարգը տնօրինող պետական մարմնի պատասխանատու անձի՝ Որոշումից և/կամ դրա փոփոխություններից բխող լիազորությունների իրականացման տեխնիկական և մասնագիտական աջակցություն:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Հարմոնիա»
տեղեկատվական տեխնոլոգիաների և
կրթության զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Սևաստոպոլյան 45
«Ինեկոբանկ» ՓԲԸ 2050022433141001
ՀՎՀՀ 00090751

------------------------------ Մ. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*«18» 10 2021թ. կնքված*
*ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72261180/3 | տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | 7 387 500 | 11 081 250 | 14 775 000 | 14 775 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հարմոնիա»
տեղեկատվական տեխնոլոգիաների և
կրթության զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Սևաստոպոլյան 45
«Ինեկոբանկ» ՓԲԸ 2050022433141001
ՀՎՀՀ 00090751

-------------------- Մ. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«18» 10 2021թ. կնքված*
*ՀՀԿԱ-ՀՄԱ-ԾՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը __________ | գտնվելու վայրը __________ |
| հհ __________________ | հհ__________________ |
| հվհհ _________________ | հվհհ_________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«18» 10 2021թ. կնքված
ՀՀԿԱ-ՀՄԱ-ԾՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն